

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ն

Օրինագիծն ընդունված է ՀՀ Գերագույն խորհրդի
կողմից 25 մայիսի 1994 թ. Հ.Ն.-1070-Ն

**ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԵՎ
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈՂՎԱԾ 1.

Տնտեսական գործունեության առանձին տեսակների համար Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող են սահմանվել եկամտահարկի հաստատագրված վճարումներ, ինչպես նաև հարկային արտոնություններ՝ եկամտահարկի և շահութահարկի հաստատագրված վճարումներով հարկվող տնտեսական գործունեության առանձին տեսակների համար:

ՀՈՂՎԱԾ 2.

Տնտեսական գործունեության առանձին տեսակների համար հաստատագրված վճարումներ սահմանելու պահից կասեցնել նախկին ԽՍՀՄ օրենսդրությամբ սահմանված և Հայաստանի Հանրապետությունում գործող եկամտահարկի արտոնությունների, ինչպես նաև «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ գլխի գործողությունը եկամտահարկի և շահութահարկի հաստատագրված վճարումներով հարկվող տնտեսական գործունեության այդ տեսակների համար:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Լ. Տեր-Պետրոսյան

14 հունիսի 1994 թվականի,
քաղ. Երևան
ՀՕ-104